




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Leop. / Leop. / 1899

9(47.925)

17-31



31 AUG 2007

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ

Ի ՆԱԿԱՍՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԵՐԷԹ ԵՒ

ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

ՓԵՏՐ. 22, 1932, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 2—11

(ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ)

INTERCOLONIAL HALL

214 Dudley St., (Near Dudley Station) Roxbury

ՆԱԽԱՃԵՈՐՈՒՔԻԱՄԲ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴ-ՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ

ՏԵՍ 1931-Ի ՏԱՐԵԳԻՐՔԸ, ԷՋ 29

9(47.925)

Մ-31

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

ՏՕՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՎԻԿԵԱՆ, Ատենապետ
ՅԱՐԵԹ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ, Ատենադպիր և
Ընդհ. Քարտուղար

ՍԱՐԳԻՍ ԿՕՇԿԱՐԵԱՆ, Գանձապահ
ՏԻԳՐԱՆ ԷՔՄԷՔՃԵԱՆ, Հաշուակալ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ, Խորհրդական
ԵՂԻԱ ԳԶԻՐԵԱՆ, Խորհրդական
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՕԼԼԻԿԵԱՆ, Խորհրդական
ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Խորհրդական
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, Խորհրդական

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Յարուբին ԽՕԼԼԻԿԵԱՆ, Ատենապետ
Յարուբին ՍՈՂԻԿԵԱՆ, Ատենադպիր
Ղուկաս Արոյեան, Գանձապահ
Արամ Եսպնեան, Խորհրդական
Յովսէփ Գրիգորեան »
Միհրան Կօշկարեան »
Խորէն Վարդանեան »

7.925)
Մ-31

9(47.925)
Մ-31

05 SEP 2011

93

Մ-Գ Տասն ԼՆ-ԻԿ

ՄԱՍՆ Ա.

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

ԵՒ

ՅԱՅՏԱԳԻՐ

Compliments

of

DR. H. ZOVICKIAN

ՏՈՔԹ Յ. ԾՈՎԻԿԵԱՆ

Tel. Middlesex 5978

Օֆիսի ժամեր
3—5 Կ. Ե.
7—8 Կ. Ե.

528 MT. AUBURN STREET
WATERTOWN, MASS.

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
\$50,000 ԱՐՇԱԽԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Մէտֆորտ, Մէս.,

19

Սիրելի Հայրենակից

Համա-խարբերդցիական Միութեան Կեդր. Մարմինն եւ 50,000 տոլարի Արշալի Յանձնախումբն խորապէս կը դնահատէ ձեր հետաքրքրութիւնը Միութեանս զործունէութեան շուրջ եւ կը յայտնէ իր սրտագին շնորհակալութիւնն այն օժանդակութեան համար, որ բերիք ձեր սկսած հանդանակութեան:

Ներփակ կը գտնէք ձեր նուէրին համապատասխան ընկալագիրը:

Յարգանքներով

Ի դիմաց

Համա-խարբերդցիական Միութեան
Կեդրոնական Գործադիր Մարմնին

Եւ

Յիսուն Հազար Արշալի Յանձնախումբին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՕԼԼԻԿԵԱՆ,

Գամապահ

H. KOLLIGIAN

146 Forest St., Medford, Mass.

Compliments

of

Dorchester Ice Cream Company

Tel. Columbia 5137

1055 DORCHESTER AVENUE

DORCHESTER, MASS.

25 .06. 2013

12, 32

Compliments

of

LEVON L. KOCHIAN

Room 512

Hancock 0695

H. S. AROIAN

ՀՈՒԿԱՍ ԱՐՕՅԵԱՆ

JEWELER

Diamonds, Watches, Clocks, Silver-ware
Novelties and Suit Cases

453 WASHINGTON STREET

BOSTON, MASS.

Compliments

of

ARAM BRAZILIAN

BERBERIAN BROTHERS

Manufacturers of


Special Cigarettes

143 BRIGHTON AVE.,

ALLSTON, MASS.

Telephone

STADIUM 6596



624-75

ՀԱՄԱ-ԽԱՐԵՐԵՐԳԻՏԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
\$50,000 ԱՐՁԱԽԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Մէտֆրդ, Մէս.,

19

Սիրելի հայրենակից

Համա-խարբերողական Միութեան Կեդր. Մարմինն եւ 50,000 տարբեր Արչաւի Յանձնախումբն խորատէս կը ղնահատէ ձեր հետաքրքրութիւնը Միութեան ղործունէութեան շարջ եւ կը յայտնէ իր սրտագին շնորհակալութիւնն այն օժանդակութեան համար, որ բերիք ձեր սկսած հանդանակութեան:

Ներքեակ կը գտնէք ձեր նուէրին համադատարանը քնկալագիրը:

Յարգանքներով

Ի դիմաց

Համա-խարբերողական Միութեան
Կեդրոնական Գործադիր Մարմնին
Եւ

Յիսուն Հազար Արչաւի Յանձնախումբին
ՅԱՐՈՒԹԻԻՆ ԽՕԼԼԻԿԵԱՆ,
Գաւազապահ

H. KOLLIGIAN

146 Forest St., Medford, Mass.



Compliments
of

A. O. SAMUELIAN

Wholesale Confectionery

603 MT. AUBURN STREET

WATERTOWN, MASS.

Կարդացէ՛ք «ԲԱՆԻՈՐ»Ը

Խ. Հայաստանի եւ Ամերիկահայ աշխատանքութեան
չահերի պաշտպան շաբաթաթերթը

Տարեկան բաժնեգին \$2.00

Հասցէ՝ P. O. Box 441, Mad. Sq. Station
New York, N. Y.

GEORGE ARA SURABIAN

կը մատակարարէ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՕՐԳԵՍԹՐԱ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ

Հանդէսներու, Հարսանիքներու, Խնջոյքներու,

Ներկայացումներու, Պարահանդէսներու :

50 Bowers Street,

W. Medford, Mass.

Tel. Arlington 3214-M

Compliments

of


Consolidatee Paper Bag Company

GINSBURG BROS.

Tel. Prospect 1620

561—569
WINDSOR STREET

SOMERVILLE
MASS.



ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ ՏՊԱՐԱՆ

340 PUTNAM AVENUE
CAMBRIDGE, MASS.

Tel. Porter 3938-W

ՏՊԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ, ՄԵԾ ԿԱՄ ՊԶՏԻԿ

ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԿԱՄ ՀԱՅՆԵՐԷՆ

Բարեսիրական ընկերութիւններու եւ եկեղեցիներու
գեղջեալ գներով :

Compliments

of

A FRIEND

Dodge and Plymouth Cars and Trucks

DODGE SIX
\$795 and up

PLYMOUTH
\$535 and up
F. O. B.

DODGE EIGHT
\$1115 and up

Կը ներկայացնէ

ՏԱՃԻ ԵՒ ՓԸԼԻՄԸԹԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.— Մեր լաւագոյնը կ'ընենք զոհացնելու մեր բոլոր յաճախորդները :

2.— Որպէս մեքենադէտ՝ կուտանք կարգ մը չափերէն թելադրութիւններ օթոմոպլիներու գործածութեան մասին :

3.— Կը սորվեցնենք վարելու արուեստը եւ լայսէնսը կ'ապահովենք :

4.— Մեր պայմանները մատչելի են ամէն քսակի :

6.— Վճարումները կարելի է երկարել մինչեւ 18 ամիս :

ՄԵԶԻ ԴԻՄԵՅԷՔ

Նոր կամ Գործածուած օթոմոպլիներ գնելու ատեն

ԼԵՒՈՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

LEVON MOTOR CO.

20 Fordham Rd., Allston, Mass.

Residence Tel.
MIDDLESEX 7054-J

Business Tel.
ALGONQUIN 9369

Compliments

of

YEPRAD GROCERY CO.

GARO MOOTAFIAN

583 MT. AUBURN STREET
WATERTOWN, MASS.

275 BROADWAY
BOSTON, MASS.

Compliments

of

YESSAIA BROS.

611 MT. AUBURN STREET
WATERTOWN, MASS.

JOHN MANGURIAN

with

R. H. White Company
Furniture Department

Մեր հայրենակիցներ երբ պէտք ունենան կահ-կարասիի, կըրնամ իրենց օգտակար ըլլալ՝ եթէ զիս տեսնելու ըլլան :

Studio
of *Perham*
165 Tremont St.,
Boston
PORTRAITS OF INDIVIDUALITY
Phone HANcock 2786

ՄԱՍՆԱԻՈՐ
ԶԵՂԶ
ՀԱՅԵՐՈՒ
ՀԱՄԱՐ

ՄԵԾ ՆԿԱՐ ՄԸ ԶՐԻ
ՄԵԿ ՏԸԶԸՆԻ ՀԵՏ

Շնորհիւ մեր երկար տարիներու փորձառութեան՝ կը հա-
նենք գեղեցիկ, բնական եւ ինքնատիպ պատկերներ :

Փէրիէմ Սթիւտիօյի պատկերներուն անգերազանցելի ըլ-
լալը գիտնալու համար՝ տեսնել պէտք է :

Մանուկներու, մայրերու, հայրերու եւ նորոգ ամուս-
նացեալ ամուսններու պատկերներուն նմոյշները մեր Սթիւտիօյին
մէջ՝ մեր յանձնարարականներն են :

Սիրով կը հրաւիրենք մեր հայրենակիցները մեր ըբ-քու-
տէյք Սթիւտիօն՝ ստանալու մանրամասնութիւնները :

Տէր եւ Տնօրէն՝ Ա. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՏՈՔԹ. ԼԵԻՈՆ ԲՐՈՒՏԵԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏ ԱԶԲԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԵԱՆ

101 TREMONT STREET

BOSTON, MASS.

Tel. Liberty 7923

Օֆիսը բաց է
9—5

Մեր մասնագիտութիւնն է
աչֆերը ֆնենել եւ ըստ այնմ
ակնոցներ յանձնարարել :

Compliments
of

HARRY BARMAKIAN

ԱԴԱՄԱՆԴԱԳՈՐԾ

387 WASHINGTON STREET

BOSTON, MASS.

Tel. Liberty 7915

Room 610

ՀԻՄԱ Է ԺԱՄԱՆԱԿԸ

ԳՆԵԼՈՒ

ԱԴԱՄԱՆԴԱԳՈՒՌ ՄԱՏԱՆԻՆԵՐ



Իրական արժէքը \$90.00

այժմ \$30.00

Մափուր blue white

աղամանդ



Ուէտինկ ըինկով միասին

\$30.00

Կերաշխաւորեմ

Հեռու տեղէ ապսպրանքներ կը դրկենք C. O. D.-ով : Եթէ գոհ
չի մնաք՝ դրամնիդ կը վերադարձնենք :

Compliments

of

DR. BERJ CHUTCHIAN

Dentist

25 HUNTINGTON AVENUE

BOSTON, MASS.

ՀԱՅՍ ՏԵՍԱԻ

«Ա Ր Փ Ի»

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՅԻ

Ա. Բ. Գ. ԵՒ Դ. ԹԻԻԵՐԸ

Մանուկներու, Պատանիներու եւ Ծնողներու բաժիններով
Տարեկան Բաժնեգին՝ \$2.00

Հասցէ՝ P. O. Box 77, Allston, Mass.

Compliments

of

ALEXANDER ASTOR

Architect

6 FIFTH AVENUE

WATERTOWN, MASS.



**ORIENTAL
Grocery Co.**

143 BLACKSTONE STREET
BOSTON, MASS.

JOHN S. NAHIGIAN, Prop.

Telephone
CAPITOL 6396

ՀԱՅԱԿԱՆ ՆՊԱՐԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Համեստարիւյլ Տիկնայք,

Այս հանդէսէն յետոյ երբ տուն կը վերադառնաք եւ կը սկսիք ճաշի պատրաստութիւն տեսնել, հաւանականաբար պիտի նշարէք որ շատ մը նպարեղէներ կը պակսին ձեր դարակներուն վրայէն եւ կը մտադրէք առաջին պատեհութեամբ գնումներ ընել:

Դիմեցէք Յովհաննէս Նաիկեանի Նպարեղէնի Վաճառատունը, ուր պիտի գտնէք ամենաբարձր ապրանքները ամէնէն աժան գնով:

Ապրտարանքներ ձրի կը դրկեմք Պողթոն եւ Շրջակայքը:

Տնտեսական տազնապի այս օրերուն՝ կ'արժէ խնայողութեամբ մասին մտածել, եւ գնել այն վաճառատունէն՝ որուն գները սովորականէն վար են — ամենաաժան են:

Կանխաւ Շնորհակալութիւններ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ, Սեփականատիր

ՀԱՅ ԾԱՂԱՎԱՃԱՌ

Պոսթմոնի և Երջակայի հայեր կրնան օգտուիլ մեր երկար
տարիներու փորձառութենէն :

Կը պահենք ծաղիկներ և կը պատրաստենք ծաղկեպսակ-
ներ ամէն պարագայի յատուկ՝ խիստ զիւրաժատչելի գներով :

S. SAHAGIAN COMPANY

746 MASSACHUSETTS AVENUE
CAMBRIDGE, MASS.

Tel. Porter 4186

Հեռախօսով ապալրանքներ անմիջապէս կը կատարենք :

Compliments

of

STAR PHOTO-ENGRAVING CO.

ՆՈՐ ՀԱՍՅԷ

147 SUMMER STREET
BOSTON, MASS.

Ս. ՄԱԼԵԻՄԷՉԵԱՆ

Compliments

of

John Hovannessian

ՄԻԱԿ ՀԱՅ

ՄԵՌԵԼԱԲԱՐՁԸ ՊՈՍԹՈՆԻ
ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

Յանճնարարուած Պոսթմոնի

Հայ Եկեղեցիներէն

Telephone: University 9410

1168 MASSACHUSETTS AVENUE

CAMBRIDGE, MASS.



ՕՐԱՐԵՐԲ

\$6.00

ԱՐԱՐԵՐԲ

\$5.00

ԵՐԱՆԻՔԸ ՄԻՍՍԻՆ

\$10.00

HAIRENIK PRESS
13 SHAWMUT ST., BOSTON, MASS.

SOMERVILLE FUEL CO., Inc.

ALL RAIL COAL

36 CHESTNUT STREET

SOMERVILLE, MASS.

Telephone

Prospect 0351—0352

ԽՕԼԼԻԿԵԱՆ ԵՂԲԱՐԲ

Compliments

of

SOMERVILLE NASH CO.

NASH AND PONTIAC MOTOR CARS

UNION SQUARE

SOMERVILLE, MASS.

Tel. Prospect 1690

ԽՕԼԼԻԿԵԱՆ ԵՂԲԱՐԲ



624-75

Compliments

of

Colonial Beverage Company
INC.

PURE -- DELICIOUS -- WHOLESOME

GIVE YOURSELF A TREAT

141 HAMPSHIRE STREET
CAMBRIDGE, MASS.

Tel. Porter 5820

Colonial Beverages

On sale on the Premises

Compliments

of

ADAMS COAL COMPANY

YARDS

277 Beacon Street, Somerville, Mass.

1000 Massachusetts Avenue, Boston, Mass.

TEL. UNIVERSITY 3100

SOGHIGIAN BROTHERS
COAL AND WOOD CO.

231 BOYLSTON STREET

WATERTOWN, MASS.

TEL. MIDDLESEX 1344-R

K. B. TASHJIAN

ԿԵՆՏԵՆՔ

567 MT. AUBURN ST., WATERTOWN

Tel. Middlesex 3389-M

Կը պահենք Հայկական եւ Ամերիկեան ապրանքներ — պիֆ, իօրք, լէմ: Սըմբուլի թարմ գառնուկի միս:

Ամէն կարգի պտուղ եւ բուսեղէններ խիստ դիւրամատչելի գներով, մաքուր եւ քարմ:

ՓՈՐՁԵՑԷՔ ԵՒ ՀԱՄՈՋՈՒՅՑԷՔ

Compliments

of

A FRIEND


Dexter Radio and Music Co.

48 DEXTER AVENUE
WATERTOWN, MASS.

Tel. Middlesex 7225

Hello . . .

MY DADDY



Model RAE-59

\$350⁰⁰ Complete

. . . Preserve Your

Baby's Voice for Many Years to Come
with RCA Victor Home Recording

Այս Radio Combinationի միջոցաւ Ձեր անձնական ըն-
թրրաները կրնաք հանել կէս ժամ տեւողութեամբ, մէկ ըն-
թրաը կը նուազէ կէս ժամ, որեւէ ընտելոյ երգեցողութիւն
կամ խօսակցութիւն ընթրաւի վրայ կը հանէ կէս ժամ տեւո-
ղութեամբ:

Ձեր հին ընտելութիւնը կամ ֆօնօկրաֆօններուն ընդ աւրժե-
քը կը վճարենք, եթէ մեզմէ գնելու ըլլաք:

Կը պահենք նաեւ Electric Refrigerator, Vacuum
Cleaner, Oil Burner: Ամէն տեսակ նուազի գործիքներ, ջու-
թակ, պէնճօ, քլարինէթ, եւայլն:

Տէր եւ Տնօրէն ՄԵԼԻՔՈՆ ԱԼԵՄՇԵՐԵԱՆ

Tel. Kenmore 0585

DR. GREGORY S. MEERYECK

Dentist

Office Hours

711 BOYLSTON STREET

9—12 2—5

BOSTON, MASS.

ԵՐԵՒԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՄԱԲՈՒՐ ԵՒ ՀԱՄԵՂ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յանայսէ ԶԱԽՄԻՇԻՆ Ճաշարանը

490-A Tremont Street

Boston, Mass.

Compliments

of

MIHRAN VANETZIAN

Special Agent of

The Prudential Insurance Co. of America

A R A M G A V O O R

Հայ Ներկայացուցիչ

Westinghouse Refrigerators

Maytag Լուսցի Մեքենաներու

Residence

15 HOWE STREET
WATERTOWN, MASS.

Middlesex 3692-J

Office

19 MT. AUBURN STREET
WATERTOWN, MASS.

Middlesex 5040

Armeno Cereal Co.

WESTBORO, MASS.

Telephone

Westboro 519



Մեր հայրենակիցները գոհ պիտի մնան, եթէ զնեն մեր
“Armeno” Brand Bulgur-ը:

Մեր գործարանը խիստ առողջապահիկ պայմաններու տակ
կ'արտադրէ պուրկուր Քալիֆորնիայի ցորենէն որը կը պարու-
նակէ առատ հանքային նիւթեր, բուսական ճարպ ու փրօթէլիթ:

Կը պահենք Թամպըն Սիտրէս բէյլին եւ աղցուած սոսկ:

ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՆԵԱՆ, Սեփականատէր

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕԲԷՐԷԹ

Նախաձեռնութեամբ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

Եւ մասնակցութեամբ

ՀԱՅ ՏՐԱՄ ՕԲԷՐԱԹԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ

Ղեկավարութեամբ Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Պոսքոնի մէջ մեծ պատրաստութեամբ կը ներկայացնէ

«ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ»

(ՈՒՐԱԽ ԶՈՒԱՐԹ ՕԲԵՐԷԹԸ)

Եւ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՐԱԽ ԽԱՌՆ ՎՕՏՎԻՆԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԵՒ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ

ՓՐՕՖ. Ս. ՔՈՒՇՆԱՐԵԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆԱՀԱՊԵՏ (Գիւղացի տանուտէր)	ՊՐ. Կ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ
ՄԱՐԹԱ (նրա կինը)	X
ՆԱԶԻԿ (նրանց աղջիկը)	ՕՐ. Ա. ՃԱՆՃԻԿԵԱՆ
ՇՈՂԻ (Մարքայի քոյրը)	ՕՐ. Ա. ՊՐԱՋԻԼԵԱՆ
ՍԱՔՕ (Նազիկի սիրահարը)	ՊՐ. Ե. ՔԷՊԱՊՃԵԱՆ
ՕՀԱՆ (գիւղական ֆէհեայ)	ՊՐ. Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԱՐՇԱԿ (նրա ապուշ որդին)	ՊՐ. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ
ԾԱՌԱՅ (Նահապետի ծառան)	ՊՐ. Յ. ԱՐԳՈՍԵԱՆ

Եւ ուրիշ գիւղացիներ ու աղջիկներ

«ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ»

Հայկական խառն օրերէքները կը նշանակեն անվերջ
քրքիչ, ծիծաղ եւ զուարթութիւն. հոն կ'երբեմն հայ գեղջկա-
կան բարբեր եւ սովորութիւններ իրենց հարազատ գոյներով եւ
պատկերներով, համեմուած գեղեցիկ եւ հրապուրիչ երգերով.
այսպէս լեռնական յուզիչ ՀԱՊԸՐՊԱՆԻ հետ գեղջուկ ՃԱՆՃ
ՃԱՆԸ որ կը գերէ, կը յուզէ եւ կը տանի ֆեզ հայրենի եր-
կիրդ... բայց ո՛չ լալու, այլ վայելքի եւ ծիծաղի համար:

«Ուշ լինի նուշ լինի» օրերէքը ուր որ խաղցում է գը-
տած է մեծ ընդունելութիւն. «Ուշ լինի նուշ լինի» օրերէքի
նիւթը համեմուած է միամիտ հօր մը զաւեշտական արկածնե-
րով իր տղուն նշանախօսութեան առթիւ, տղայ մը որ հակա-
ռակ իր մտքի անհաւասարակչութեան, կ'երագէ «իտէպա-
կան» ամուսնութիւն եւ 68 հատ զաւակներ, որոնց անունները
կ'երգէ ու կը պարէ այնքան ապուշօրէն:

Օհան, Ոսկան, Կարապետ,
Սիսակ, Միսաֆ, Նահապետ,
Յուսիկ, Մուսիկ ու Զատիկ,
Շուշիկ, Վարսիկ ու Աստղիկ:

Իսկ Շողին, խաղին խորամանկ կինը (նատուն) ուղղակի
փորձանք կը դառնայ հօր եւ որդւոյն գլխուն իր խորամանկ
եւ անակնկալ խաղերով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕԲԷՐԷԹ

Նախաձեռնութեամբ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

Եւ մասնակցութեամբ

ՀԱՅ ՏՐԱՄ ՕԲԷՐԱԹԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ

Ղեկավարութեամբ Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Պոսքռնի մէջ մեծ պատրաստութեամբ կը ներկայացնէ

«ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ»

(ՈՒՐԱԽ ԶՈՒԱՐԹ ՕԲԵՐԷԹԸ)

Եւ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՐԱԽ ԽԱՌՆ ՎՕՏՎԻԼՆԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԵՒ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ՏԱՂԱՆԴԱԽՈՐ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ

ՓՐՕՖ. Ս. ՔՈՒՇՆԱՐԵԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆԱՀԱՊԵՏ (Գիւղացի տանուտէր)

ՊՐ. Կ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԱՐԹԱ (նրա կինը)

X

ՆԱԶԻԿ (նրանց աղջիկը)

ՕՐ. Ա. ՃԱՆՃԻԿԵԱՆ

ՇՈՂԻ (Մարթայի քոյրը)

ՕՐ. Ա. ՊՐԱՋԻԼԵԱՆ

ՍԱՔՕ (Նազիկի սիրահարը)

ՊՐ. Ե. ՔԵՊԱՊՃԵԱՆ

ՕՀԱՆ (գիւղական ֆէհեայ)

ՊՐ. Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԱՐՇԱԿ (նրա ապուշ որդին)

ՊՐ. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԾԱՌԱՅ (Նահապետի ծառան)

ՊՐ. Յ. ԱՐԳՈՍԵԱՆ

Եւ ուրիշ գիւղացիներ ու աղջիկներ

«ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ»

Հայկական խառն օրերէքները կը նշանակեն անվերջ ֆրֆիշ, ծիծաղ եւ զուարթութիւն. հոն կ'երեւան հայ գեղջկական բարբեր եւ սովորութիւններ իրենց հարազատ գոյներով եւ պատկերներով, համեմուած գեղեցիկ եւ հրապուրիչ երգերով. այսպէս լեռնական յուզիչ ՀԱՊԸՐՊԱՆԻ հետ գեղջուկ ՃԱՆՃԱՆԸ որ կը գերէ, կը յուզէ եւ կը տանի ֆեզ հայրենի երկիրդ... բայց ո՛չ լալու, այլ վայելֆի եւ ծիծաղի համար:

«Ուշ լինի նուշ լինի» օրերէքը ուր որ խաղցում է գըտած է մեծ բնդունելութիւն. «Ուշ լինի նուշ լինի» օրերէքի նիւքը համեմուած է միամիտ հոր մը զաւեշտական արկածներով իր տղուն նշանախօսութեան առթիւ, տղայ մը որ հակառակ իր մտքի անհասարակչութեան, կ'երագէ «խտէալական» ամուսնութիւն եւ ճՏ հատ զաւակներ, որոնց անունները կ'երգէ ու կը պարէ այնքան ապուշօրէն:

Օհան, Ոսկան, Կարապետ,

Սիսակ, Միսաֆ, Նահապետ,

Յուսիկ, Մուսիկ ու Զատիկ,

Շուշիկ, Վարսիկ ու Ասողիկ:

Իսկ Շողին, խաղին խորամանկ կինը (հատուն) ուղղակի փորձանք կը դառնայ հոր եւ որդւոյն գլխուն իր խորամանկ եւ անակնկալ խաղերով:

Radio-Record-Oil Burner

ԿՈՒՋԷՓ



Աժան, տոկուն եւ հոշակաւոր ըմպերու-
քեանց ըէտիօները զնել, Դիմեցե՛ք՝

ԱՐՄԷՆ ՎԱՅԻ ՐԵՏԻՕ-ՐԵԿՐԵՏ ԸՆԿ.

561-A MT. AUBURN STREET

(Ֆայր Սթէյշընի դիմացը)

WATERTOWN, MASS.

Tel. Middlesex 4758-W

**STEP
AHEAD**

with Us
in 1932



\$66⁵⁰
Complete

RCA Victor
Model R-6



Ունինք ըէտիօի քիւպեր եւ
ամէն տեսակ հայերէն ու
քուրճերէն ըէքըրտներ:

ՈՒՆԻՆՔ

Պոլսական ըէքըրտներ ու-
նինք: 5 հատ զնոդին նուէր-
ներ ունինք:

ՐԵԿՐԵՏՆԵՐՈՒ ԱԼՊՈՄ
25 ՍԷՆԹ ԵՒ ԱԻՆԼԻ

ՖՐԻՃԸՐԵՅԹԸՐ ԳՆՆԼԷ
ԱՌԱՋ ՄԵՋ ՏԵՍ

Պատրաստ ունինք հինգ տե-
սակ Րէտիօ-Փօնօկրափներ,
70 տոլար եւ աւելի:

ՄԱՍՆ Բ.

ՏԱՐԵԴԻՐՔ

1931

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

2-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻԻ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԱՐԵԳԻՐԲ — ԹԻԻ 2

ՀԱՄԱ—ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՄԱՐՄԻՆ

ՊՈՍԹՈՆ. 1932

**ՆՈՐ
ԽԱՐԲԵՐԴԻ**

1929
Համար ցարդ ծախ-
արւած է \$180,000:
Շինուած են 60 ըն-
տանիքի բաւարար
տուններ:

Շնորհակալութեամբ կ'ընդունուին

1. Նուէրներ անհատներէ
2. Ուսումնասիրաց Ընկերութիւններէ
3. Կտակներ եւ ապահովագրութիւններ
4. Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ

Եւ օրը օրին կ'արձանագրուին
ՈՍԿԵՄՍԵՆՆԻ մնայուն էջերուն վրայ

GENERAL UNION OF HARPOOT
463 Park Sq. Bldg. Boston, Mass.

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Եւն Տարեգիրքը (քիւ 2) դարձաւ կը յամանեմ մարանախնդիր խարբիդցիներու ուսարութեան:

Անցեալ տարի Թիւ 1 Պատկերազարդ Տարեգիրքը կատարեց մեծ ծառայութիւն մը. խարբերդ Գաւառի Հայութեան այն անձերուն եւ խումբերուն որոնք մօտէն որեւէ ծանօթութիւն չունէին ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մասին:

Կը յուսայինք որ անոր երեսումէն վերջ մէկը պիտի չի գտնուէր որ համոզուած չըլլար թէ Խ. Հայաստանի մէջ, երեսունէն 7 մզոն հեռու գէպի հարաւարեմուտք, բարբեր եւ առողջարար բարձունքի մը վրայ լուրջ եւ արդիւնաւատ աշխատանք մը իրապէս կը կատարուէր ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԿԱՌՈՒՅԱՆԵԼՈՒ համար:



ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԲԱՆՁԱՐԱՆՈՅԸ

Մինչ քուականս բնակչութիւնը այնքան մեծցած է որ մանուկներու կրթութեան համար դպրոցի մը անմիջական կառուցումը օրուան հրատապ հարցերէն մին է: Կեդրոն այդ մասին ջանքեր կը քափէ Բարեգործականի ԲՈՒՄՆԱԳԱԾ Կտակի մը դրամը շարժման մէջ դնել. այն է՝ հանգուցեալ

Այդ Տարեգրքին մէջ դրինք Խ. Հայաստանի Կառավարութեան հետ կնքուած Համաձայնագրին պատճենը, ծանօթութիւններ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մասին, Խ. Հայաստանի մեր ներկայացուցիչներուն նամակները, ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ հողին եւ շէնքերուն նկարները:

ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Ա.

ՀԱՄԱԽԱՐԱԲԵՐԴՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ ՊՈՍԹՈՆԻ ՄՕՏԻԿԸ

Համա-հարբերդցիական Միութեան տարեկան «անգերազանցելի» դաշտահանդէսը այս տարի տեղի ունեցաւ Յուլիս 26-ին դարձեալ Նորվուտի մօտիկը միլիոնատէր Ուիլիքի գեղածիծաղ լճակին հանգստաւէտ ափերուն վրայ:

հարբերդցիներ այս վայրը կոչած են «Ծով-Ք». որը իրապէս յայտնաբերուած է «Կէօլմիւս» իր Սր. Նշանովը եւ ընդարձակ ծառաստաններովը:

Ուրեմն զարմանալի չէ որ ամէն տարի այս ատենները կը բազմապատուէր իր յաւանքները հարբերդցիներու արեւմտեան դէպի Նորվուտ, Նիւ Ինկլիքսի հարբերդցիներու սիրուն «Ծով»ը:

Ապահովաբար 5(XX)-է աւելի հարբերդցիներ եւ այլ ազգայիններ ներկայ էին այս մեծ դաշտահանդէսին:

Հանդիմանալով կ'արձանագրենք որ այս տարուան դաշտահանդէսը կը գերազանցէր նախորդները շատ մը տեսակետներով:

Տեղը գտնուելու շնորհիւ իրենց վերջուած էին: Նիւ Ենթոյն, Փրո-վիտէնցի, Հարքիլըրոյն, Վուստըրցի, բոլոր մեծ ու փոքր քաղաքներէ եկողներ, առանց նամբաներ կանգ առնելու եւ նամբորդները եւ փոխները ճանաչեցնելու անոնցմէ բացատրութիւններ ստանալու համար, իրենց սրբաւ ինքնաշարժները շարժման մէջ դրած էին ժամ առաջ լաւագոյն տեղեր գրաւելու իրենց օրերներուն եւ ընտանիքներուն համար:

Կային առատ ուտելիքներ եւ զովագուցիչներ: Ոչ աւելի, ոչ պակաս: Կարգադիր Յաննախոյնը լաւ կանխատեսած էր ամէն ինչ, անցեալի փորձառութիւններէն օգտուած:

Դաշտահանդէսի ամբողջ տեսարանին խիստ գովելի կարգապահութիւն կը տիրէր այս հոծ բազմութեան մէջ: Նրեւակայեցէ՛ք 5000 ժողովուրդ մէկտեղ հաւաքուած, տարբեր տարիքներով, մտայնութիւններով եւ սովորութիւններով, որ իրարու հետ կը խօսին, կը խնայեն, եւ կը խաղան, առանց վրդովելու ընդհանուր խաղադուրիւն: Բուն իսկ տեղական կառավարութիւնը զարմանք կը յայտնէ եւ չի կրնար ըմբռնել քէ ի'նչպէս կարելի է այսքան անդորրութիւն եւ օրէնքի հնազանդութիւն: Միակ բացատրութիւնը որ կրնանք տալ սա է՝ որ տեղին հմայքը եւ գեղեցկութիւնը, լճակին խաղաղեցուցիչ տեսքը, կը զսպեն մարդոց կիրքերը, եւ երեւան կը հանեն լոկ անոնց ազնիւ բազում բնաւորութիւնները: Այդ վայրին մէջ կարելի չէ կռուիլ, զիրար ցաւցնել, իրաւունքներ կոխտել: Միջավայրի ազդեցութեան զօրաւոր ապացոյցներէն մին:

Կ'արժէ որ ամէն տարի Նիւ Ինկլիքսի հարբերդցիներ գան «Ծով»ը զիրար ողջագործելու. զգացումներ եւ խորհուրդներ փոխանակելու եւ անցեալի քաղցր յիշատակները քրքրելու:

Նիւթակահին զաւուր, այս տարուան գուտ հասոյթը նախորդները զէջանցաւ, հակառակ որ ժողովուրդի մեծամասնութիւնը կ'անցնի այսօր տընտեսական ծանր տագնապի մը մէջէն:

Մոռնուլ չէ որ այսպիսի դաշտահանդէս մը կատարեալ յաջողութիւն մը ընելու համար մեծ աշխատանք եւ ծախսեր կը պահանջէ: Այս ծախսերը գոցուելէ վերջ, Միութիւնը ունեցաւ գուտ Եան 850 տոլար: Այս Եանին մեծագոյն մասը գոյացած է մուտքերէ:

Ահաւասիկ կռիկի գումար մը, որ աւելցուց ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ գաղթական Հայերու համար տուն մը եւս այն տուններուն վրայ, որ կառուցուած են եւ տակաւին պիտի կառուցուին տարուէ տարի:

հարբերդցիներուն մեծ հաւաքոյթ մը, ուր որ ալ պատահելու ըլլայ, կը նշանակէ ուրիշ մէկ տուն մը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ:

Ուրեմն յաջողութիւն 5000 հարբերդցիներու հաւաքոյթներուն:

Յաջորդին կը սպասենք, որ ըստ սովորականին տեղի պիտի ունենայ դարձեալ Պոստոնի մէջ Ուիլիքսի ծննդեան օրը, Փետրուար 22, 1932:

Բ.

ԽԱՐԲԵՐԴՑԻՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Միմաս Գաբրիէլեանի ազգաբաղը

Ուստի Մասնաճիւղի կողմէ

Օգոստոս 16, Կիրակի ամբողջ օրը

Գ.

ՀԱԶԱՐԱԻՐ ԽԱՐԲԵՐԴՑԻՆԵՐՈՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ՓՐՈՎԻՏԵՆՍԻ ՄԵՋ, ՎԱՍԱ ՓԱՐԲ

Գործակցութեամբ հարբերդի Կրթասիրացի, Հիւսէյնիկի Վերաւանցի եւ Քեսիրիկի Ընդհ. Միութեան

Դ.

ԽԱՐԲԵՐԴՑԻՆԵՐՈՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

ՀԱՐԹՖԸՐՏԻ ՄԵՋ

Օգոստոս 23, Կիրակի օրը

Զարթըր Օր Փարբ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ամեն հայ գաղութի մէջ ունինք բազմաթիւ եւ բազմակողմանի Հայրենակցական Միութիւններ, որոնցմէ ոմանք իրենց գանձին մէջ ամբարած են հսկայական գումարներ եւ դեռ կը փորձեն պարարտացնել իրենց գանձը:

Հայրենակցական, վերաբնական կամ կրթական անուններով ի գոյ եկած այս Միութիւնները, իրենց ծննդավայրին մէջ շինարարական աշխատանքներ տանելու նպատակաւ եղած կազմուած են: Դժբաղդաբար բրբական վանտալիզմի վարած ծանօթ փաղափակաւորեան երեսէն չփափեր են այս միութիւններու ծննդավայրերը, իսկ միութիւնները կան:

Ապրող այս բազմազան Միութիւններէ ոմանց գանձը կեր եղած է անհատներու, իսկ ոմանցն ալ դարձեալ անհատներու ստամոքսին մէջ մսրսըւելու նամբուն մէջն է:

Տաւր տարի վերջ Հայրենակցական Միութիւնները դժուար քէ հիմք ունենան ապրելու, քանի որ անհատներու անուան վրայ կուտակուած գումարները ինքնաբերաբար պիտի հալեցուին, երբ հայրենակցական միութիւնները իրապէս իրենց Միութեան բուն նպատակի հիմքը չի ձգեն խորհրդային Հայաստանի մէջ:

Բարեբաղդաբար ականատես ենք հայրենակցական միութիւններու մէկ ֆանիներուն յայտնաբերած գործնական նպատակին: Նոր Արքիիքը, Նոր Մալաթիան հպարտութիւն չարժող իրողութիւններ են: Նոր Խարբերդը, Նոր Սեբաստիան մտած են փուլի մը մէջ եւ կը նկրտին հաւասարի ու նմանի առաջիններուն:

Ամերիկահայ գաղութին մէջ Հայրենակցական Միութիւնները միայն չորս հատ չեն, բազմաթիւ են. մնացածները աննպատակ եւ պարապ հաւաքականութիւններ կրնանք սեպել անօգուտ գոյութեամբ՝ երբ չը միտին որոշ նպատակ մը ընդգրկել հանդէպ խորի. Հայաստանի կամ իրենց հայրենակիցներուն եւ կամ իրենց ծննդավայրի անունը յաւերժացնել հայրենիքի մէջ:

Բոլոր Հայրենակցական Միութիւններու անդամները գրեթէ բոլորն ալ աշխատաւորներ են. եւ բոլոր Հայրենակցական Միութիւններու նուէրները յառաջացեր է աշխատաւոր մասսայի արիւն-փրօնիքներէն. աշխատաւոր, տմեղ հայութիւնը ուրեմն պատճառ մը չունի երկմտելու, նա ուղիղ կերպով պիտի ընդառաջէ խորհրդային Հայաստանի եւ իրագործէ իր ու իր միութեան ընդգրկած նպատակը առանց տարուելու չարակամներու կողմէն յարուցուած արգելիքներէն:

Հայրենակցական Միութիւններու շատ մեծ տոկոսը Գիւղական Միութիւններ են. ժամանակը հասեր է որ գիւղախումբերը կեդրոնական գաւառի

միութեան անուան տակ եւ ուժեղացնեն շինարարական նակատը գործնական վնասակարութեամբ:

Գաւառի անունով ուժեղացած Միութիւնները քոյլ պիտի չի տան, որ միութիւնը երթարկուի նոր չարաշահութիւններու:

Որքան շուտ այնքան լաւ. նիշտ հիմա է ժամանակը, որ Հայրենակցական Միութիւնները գիտակցին ապրիլ եւ յաւերժանալ:

Որքան շուտ այնքան լաւ. նիշտ հիմա է ժամանակը, որ Հայրենակցական Միութիւնները գիտակցին ապրիլ եւ յաւերժանալ:

Հայրենակցական Միութիւնները փնտալէ առաջ, զանոնք ապրեցնենք Խ. Հայաստանի մէջ: Այս է օրուան կարգախօսը:

«ԵՐԻՏԱՍՍՐԳ ՀԱՅԱՍՏԱՆ»

* * *

Խույլուցիներ *Լուսադոշեր* ըրած պիտի ըլլային, երբ իրենց դրամը յատկացնէին Նոր Խարբերդի, քանզի Թլկատին կամ Խույլու անուն քաղ մը, աւելի կը պատշաճի Նոր Խարբերդի քան Նուպարաշէնի:

Հիմա, երբ հայրենակցականներ իրենց ծննդավայրերուն անունով ձեռնարկներ կ'ընեն Հայաստանի մէջ, լաւ է որ նոյն գաւառի հայրենակցականները բոլորուին անոնց շուրջ:

Խարբերդի շրջակայ գիւղերը քող չարժան մէջ դնեն իրենց հիմնադրութիւնները, բայց քող հետեւին աւելի բնական ու պատշաճ ուղղութեան մը, իրենց ոյժերը միացնելով Համախարբերդցիական Միութեան, որ արդէն իսկ ձեռնարկած է եւ յառաջ կը տանի Նոր Խարբերդի շինութիւնը, եւ իրաւունք ունի ակնկալելու ոչ միայն Խարբերդի շրջակայ գիւղերուն, այլ ամբողջ Հայութեան աջակցութիւնը:

«ՊԱՅՔԱՐ»

ԱՄԵՆԷՆ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

(Միսսիս Մագմանեան կը գրէ)

ԵՐԵՒԱՆ, Ռուբէնա քիւ 8
Յունուար 4, 1932

Սիրելի ընկեր հօլիկեան,

Դեկ. 8 քուակիրդ ստացայ Նոր Տարւոյ նախորդ օրը: Մտածում էի գրել սրանից մի քանի օր առաջ, բայց ուշացուցի նամակս պարզ այն պատճառով որ Համա-հարբերողականի ներկայացուցիչների ժողովը գումարուելու վրայ էր երկու երեք օրից: Սակայն չյաջողուեց այդ ընել, որովհետեւ երկու ընկերներ քաղաքից հեռու տեղ գնացել էին գործի բերումով:



ՀԱՍԱՐԱԿԱՅ ՊՈԴՈՏԱՆ ՈՐ ԵՐԵՒԱՆԷՆ ԿՐ ՍԿՍԻ
ԵՒ «ՆՈՐ ԷԱՐԲԵՐՈՒ» ՄԷՋԻՆ ԿՍՆՅՆԻ

Մօտ օրէն կը գումարուի Համա-հարբերողականի ժողովը եւ 1932 տարուան համար որոշ ծրագիր մշակուելով Միութեանդ կը տեղեկագրուի: Սակայն նախ քան այդ, մի քանի տեղեկութիւններ տալ անհրաժեշտ կը նկատեմ, գէթ չափով մը ձեր փափաքին գոհացում տալու դիտարորութեամբ:

Երեք օր առաջ ընկեր Բեռնոյի հետ օր-մաշիով Նոր Խարբերող այցելեցի եւ տեսայ բոլոր լրացած եւ քերի մնացած շէնքերը: Շէնքերուն կարգադրութիւնը եւ սենեակներուն ձեւն ու սարքաւորումը շատ հաւանեցի: Թէեւ ձմեռ է, բայց բնակիչները արդէն կեանք եւ զեռ տալիս են գիւղին: Երախտները հոս հոն խաղում են: Հաւ, ոչխար, այծ գիւղի տնտեսութեան: Գլխաւոր արտադրութիւնն են դարձել: Գիւղի բրջականները տնկուած մատուաւ ծառերն արդէն ցոյց են տալիս շինարարութեան եւ գիւղատնտեսական անումի աստիճանները:


Մեր ներկայացուցիչները (Նոր Խարբերողի) որոշ աշխատանքներ տարած են, բաղդատարար աւելի քան ծախսով քան Արաբկիրցիներն ու Մալաթիացիները: Ի հարկէ Բեռնոյի վրայ ծանրացած է աշխատանքի դժուարութիւնները, եւ գլխաւորաբար անոր շնորհիւ է որ Նոր Խարբերողի գործերը յառաջ տարուած են, հակառակ որ ինքն ալ խիստ զբաղեալ եղած է Լեռնարդիւնաբերութեան աշխատանքներով: Բեն Լեռնարդիւնաբերական գործերի ընդհանուր վարիչն է ամբողջ Հայաստանի բրջանին, եւ ձեռնհասօրէն վարած է եւ կը վարէ իրեն յանձնուած ծանր աշխատանքը:

Երբ Լեռնարդիւնաբերութիւն կ'ըսենք՝ պէտք է հասկնալ մարմարի, տուփի, եւայլն քարահանքային արդիւնաբերութիւն, որը հսկայական անում ունեցած է քէ՝ որակի եւ քէ քանակի տեսակէտից:

Զեզ ծանօթ Երեւանի Խարբերողական ներկայացուցչական կազմին մէջ հաւանաբար փոփոխութիւն մտցուի, պարզ այն պատճառով որ ուսանողութեան համար Մատթէոս Գրիգորեան եւ Ռուբէն Սանդուրեան հնարաւորութիւն չունենալով աշխատանքի լծուելու: Ամենայն հաւանականութեամբ Մատթէոսը Մոսկուայի Համալսարանը ուսանելու կը գնա, իսկ Ռուբէնը արդէն Հայաստանի Համալսարանը փմիաբանութեան նիւղին կը հետեւի: Թոքովեց այլ եւ այլ պատճառներով ժողովներու ներկայ լինելու հնարաւորութիւն ունեցած չէ: Այս դրութեան ներքեւ Բեռնոյի ակնկառոյց կը սպասէ եղբր իմ Երեւան ժամանելու: Ճիշտ է որ աշխատանքի որոշ չափ մ'ալ ինձ համար պահած են: Ի հարկէ ինձ համար խոստովութիւն նախապահ չկայ, եւ ես ալ այդ աշխատանքի որոշ մէկ չափը իմ ուսերուս վրայ պիտի տանիմ, ուզեմ կամ չուզեմ:

Որպէս նորութիւն քեզ յայտնեմ որ Նոր Խարբերողի տեղական գործերու վարիչ ընտրուած է Հիւսէյնիկցի Արամ Ակոնեան (Մալուքա Աղայի քուր, այլ խօսքով հացագործ Միքայի Աղայի տղան, եւ կամ ուրիշ բառով Քիւրբանեան Պաղտասար Աղայի փեսան): Հայաստան հաստատուել է ի վեր, Արամ Ակոնեան իր մականունը փոխած է եւ կը նանցուի Յակոբեան մականունով:

Արամ Յակոբեան այժմ իր գոհանջին եւ զաւակներուն (երեք հատ) հետ կը բնակի Նոր Խարբերողի մէջ եւ հաւանաբար Քարտուղարի գործն ալ անոր յանձնուի: Երբ ներկայացուցչական ժողով գումարուի նոր վարչական կազմը ձեզ կը տեղեկագրուի:



ՄՕԹՕՐ ՍԱՅՔԸԼԸ ՄԵՇ ԳՈՐԾԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ «ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ» ԷԱՄԱՐ

Նոր հարբերդի բնակիչները այժմ կը բաղկանան Հիւսէյնիկցիներէ, Խույլուցիներէ, Մեծկերտցիներէ, Մեզիբեցիներէ, Եւայլն: Մանրամասնութիւնները կը տեղեկագրուի Համա-հարբերդցիական Միութեան Կեդրոնական Գործադիր Մարմինի:

Երկու մեծ շէնքեր պատրաստի կան այժմ նորեկներու համար: Եւ ինչ որ եկող զարթաններու մէջ հարբերդցիներ լինին՝ անոնց պիտի յատկացուին, իսկ հակառակ պարագային՝ Երեւանի մէջ ապրող Մեծկերտցի ընտանիքներ պիտի փոխադրուին Նոր հարբերդ:

Պէտք է ասել որ այս տեղի շինարարական աշխատանքներ դանդաղ կ'ընթանան շնորհիւ այն հանգամանքին որ շարժումը տեղւոյդ մէջ բոլոր լինելով սպասուած դրամը ժամանակին չէ՛ք կարող հասցնել:

Մեզի դրացի կ'ունենանք 1.500.000 բուլլի դրամագլխով մի խոշոր Պետական տնտեսութիւն, որը պիտի լինի Պետական Գիւղատնտեսական խոշոր մի ձեռնարկ: Սա ուրախալի մի պարագայ է:

Գործեցէ՛ք եւ փող հասցուցէ՛ք:

Բարեւներով
ՄԻՍԱԲ ՄԱՋՄԱՆԵԱՆ

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ

Ոսկեմատանի Յիւստակարանի բաժնին մէջ արձանագրուած են հետեւեալ ճնշեցեալներուն անունները, որոնց ի յարգանս եղած են նուիրատուութիւններ փոխան ծաղկեպսակի:

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1. Նճնիկ Բիւրքնեան | 33. Սարգիս Աւետիսեան |
| 2. Սարգիս Բիւրքնեան | 34. Աղան 3. Գեորգիեան |
| 3. Բենիամին Տինեան | 35. Մաքսիմոս Ն. Գլիբեան |
| 4. Գեորգ Մ. Թ. Սրապեան | 36. Գեորգ Երեմեան |
| 5. Աննա Սարգիսեան | 37. Եղսա Դազէսեան |
| 6. Աւետիս Ծովիկեան | 38. Յարութիւն Նորսիկեան |
| 7. Ազնիւ Քէնտէրեան | 39. Էլմաս Յովհաննէսեան |
| 8. Վարդէր Դերձակեան | 40. Եսքեր Յովհաննէսեան |
| 9. Սառա Թաշեան | 41. Գասպար Օխումեան |
| 10. Փրքըր Փամպուքնեան | 42. Աւետիս 3 Փիլիպպոսեան |
| 11. Աննա Նորոյեան | 43. Թորոս Ռստիկեան |
| 12. Մարգարիտ Աւագեան | 44. Գեորգ Էլմասեան |
| 13. Գեորգ Գազանեան | 45. Մարքա Բալուցեան |
| 14. Տիգրան Էփմէֆեան | 46. Յարութիւն Թաշեան |
| 15. Պետրոս Ասատուրեան | 47. Ռուբէն Ստեփանեան |
| 16. Էլմաս Արոյեան | 48. Սարգիս Վարդանեան |
| 17. Մարգարիտ Մինասեան | 49. Կարապետ Թումանեան |
| 18. Եղսա Մարտիրոսեան | 50. Արշալիր Արփիարեան |
| 19. Լեւոն Կէօլնիւֆեան | 51. Կիրակոս Տօնապետեան |
| 20. Ասատուր Քէլէշեան | 52. Կարապետ Օղասափեան |
| 21. Մուշեղ Ս. Նանարեան | 53. Եղսա Սարափեան |
| 22. Կարապետ 3 Ժամկոչեան | 54. Յար. Բարեջանեան |
| 23. Կարապետ Նանարեան | 55. Հ. Համբարձումեան |
| 24. Հրաչ Առաքելեան | 56. Գեորգ 3. Անթանոսեան |
| 25. Մարիամ Ժամկոչեան | 57. Կարապետ Ճանճանեան |
| 26. Մարիամ Մանթարեան | 58. Գ. Տէր Յովհաննէսեան |
| 27. Գեորգ Կիրակոսեան | 59. Համբարձ. Եղուպեան |
| 28. Գաբրիէլ Ռստիկեան | 60. Զարդար Արօգեան |
| 29. Հայկանոյշ Սամուրեան | 61. Գեորգ Վ. Թազուրեան |
| 30. Պերն Ահարոն Գեորգեան | 62. Մկրտիչ Խաչատուրեան |
| 31. Գրիգոր Երեմեան | 63. Յարութիւն Արոյեան |
| 32. Հանի Կ. Թիւֆէնֆեան | 64. Մարիամ Տ. Ստեփանեան |

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԸ ԿԸ ԾԱՂԿԻ

ՆԱՄԱԿՆԵՐ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ա.

Անշուշտ ստացած կը լինի մեր նախորդ գրութիւնը. որտեղ կանգ էր առնուել յատկապէս ներգաղթի խնդրոյն վրայ: Ինչպէս գրել էինք՝ այդ հարցը վերջացել է դրական իմաստով, եւ մնում է որ դուք լայն ընթացք տայիք այդ աշխատանքներին, եւ նրան դարձնէիք ձեր գործունէութեան առանցքը:

Ինչպէս գիտէք, բոլոր տրուած է խորհրդային Հայաստան մեկնելու բաւականաբար գաղթականութիւն: Ժամանակն է որ դուք կարողանաք լրիւ օգտագործել այդ հնարաւորութիւնը, եւ օր առաջ հետաքրքրութիւն արթնցնել մեզ մօտ փոխադրուող խորհրդայիններու մէջ, յատկապէս ներգաղթը արդարացնելու իմաստով:

Հանգամանքները պէտք է դասաւորել այնպէս որ ոչ ուէ քան Գեղտեմբերի վերջերը նրանք լինին այստեղ:

Ձեր ուղարկած վերջին երկու մեքենաները Տան Թրքի սխաբմի՝ ըստացուած ու դրուած են օգտագործութեան մէջ:

Վերջերս մեր շինարարութեանց տուած ենք մեծ քափ ներգաղթի իրքեր նախապատրաստութիւն: Սկսել ենք երեք շէնքերու կառուցման աշխատանքներուն, որոնցից առաջինը պատրաստ կը լինի ոչ ուէ քան Հոկտեմբեր 5 կամ 10:

Խմելու ջուրը սայլակի միջոցաւ փոխադրել ենք մինչ օրս դրացի գիւղից, որը գտնուում է 600 մետր հեռաւորութեան վրայ: Սակայն այդ կերպ նպատակաւորաբար չլինելով, արդէն միջոցներ ենք ձեռք առել ջրատար խողովակներ հայրաքելու, որպէս զի ունենանք մեր փողոցներում հոսող մաքուր խմելու ջուր:

Աւանային տնկագործութեան համար նոյնպէս տարւում ենք նախապատրաստական միջոցներ: Ծառատունկերը ստանալու համար արդէն կընքել ենք պէտք եղած պայմանագիրը:

Մօտ օրերս պիտի ունենանք հեռախօս եւ բառիս:

Վարչութեան նախագահ՝

Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Քարտուղար

Ո. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ

Սեպտեմբեր 9, 1931

Երևան, Խ. Հայաստան

Բ.

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ, Գեղտ. 19, 1931

Յարգելի Հնկերներ,

Մեր աշխատանքները կանոնաւոր եւ աւելի արագ կերպով կը շարունակենք: Այս տարւան սկսած չորրորդ եւ հինգերորդ շէնքերու կառուցումը լրացուցած ենք: 1932 թիւին կառուցուելիք 6-րդ շէնքի հիմք սկսած են փորել: Այժմ հնարաւորութիւն ունինք արտասահմանէն գալիք խորհրդային գաղթականներէն մեզ մօտ տեղաւորել 60 ընտանիք:



ՎԵՅԵՐՈՐԴ ՏԱՆ ՀԻՄԵՐԸ ԿԸ ԳՐՈՒԻՆ


Այս տարւան դաւտային աշխատանքները արդէն վերջացած են, ինչպէս հաշիւներէն կը տեղեկանաք: Այս տարի բանջարանոցը աւելի յաջող էր քան անցեալ տարուանը: Արդէն սկսած ենք գարնան նոր տնկուելիք ծառատունկերու տեղերը փորել եւ ցանելու համար նոր հողամասեր վարել տալ:

Պետական օժանդակութեամբ Ջրային Տնտեսութիւնը իր հսկայ մեքենաներով կ'աշխատի գիւղեր ցորել 1932 թիւին լմացնելու մայր առուն, որ պիտի ոռոգէ 50,000 հեկտար հող, որու մէջ է մեր ընդհանուր հողաբաժինը:

Շուտով պիտի սկսի Տավալուի հսկայ սիմէնթի գործարանը, որուն ելքաբերական ուժի լարերը պիտի անցնին մեր հողին մէջէն, անանկ որ մենք հեշտութեամբ պիտի կարողանանք օգտուիլ, լուսաւորելով մեր տուները, փողոցները եւ դաւտը: Այն ժամանակ հնարաւոր կ'ըլլայ դաւտը ջրել եւ այլ աշխատանքներ ընել գիւղերը օգտագործելով:

Երեւան քաղաքի ջուրը մի քանի անգամ աւելցուցին՝ չտեսնւած կերպով անոյ բազմամարդութեան բաւարարութիւն տալու համար: Զուրը պահանջուած քանակէն աւելի ըլլալով, հնարաւորութիւն կայ մեր Նոր Խարբերդի կողմը մինչեւ 50 քիլոմէթրի վրայ գտնուած բոլոր գիւղերուն մատակարարել քաղաքի հոշակաւոր ջուրը:

Խորհրդային երկրի ուրիշ մասերու մէջ ապրող Խարբերդցիները, որոնք լիովին չէին գնահատեր Նոր Խարբերդի կառուցումը, տեսնելով յարաճուն շինարարական եւ գիւղատնտեսական աշխատանքները, աւելի եւ աւելի կը մօտենան գործին եւ կը փափաքին բնակիլ Նոր Խարբերդի մէջ:



ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ ԵՌՈՒՋԵՆԸ

Անոյ բնակչութեան հետ կ'անի նաեւ երախաներու քիւր: Ասոնք սովոր էին մօտակայ գիւղին մէջ ուսանիլ: Տեղի հեռաւորութեան ու ցուրտի պատճառաւ դպրոցական աշխատանքները այժմ մեր մօտ կը կատարուին: Բացուած է նաեւ անգրագէտներու եւ կիսանգրագէտներու գիշերային դպրոց: Բնակչութիւնը համաձայնելով կուսակցութեան որոշումին՝ խոստացած է 1932 թիւին Նոր Խարբերդի մէջ չքողուլ ոչ մի անգրագէտ: Կը խորհինք որ Ամերիկայի վարչութիւնը եւ բանուորութիւնը այս շարժումը սրտանց պիտի ոգջունեն, եւ ամէն կերպով պիտի աշխատին ձեռք բերել այն եզրիպտոսի կտակը որ եղած է Նոր Խարբերդի մէջ դպրոց մը կառուցանելու համար: Սա ամենակարեւոր հարցերէն մին է:

Գարնան կառուցուելիք բոշնաբուժարանի համար մեքենաներ պէտք են:

Նախագահ՝ ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ղեկավար՝ Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

Գ.


ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽԱՐԲԵՐԴԻՆԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նամակ երեւանից

Յարգելի Հայրենակիցներ.

Նախ ընդունեցէք մեր ջերմագին բարեւները, տեղիս Մեծկերտցիներու լիագործներու կողմից: Մեր այս նամակով նախ գալիս ենք ծանօթանալու ձեզ հետ եւ ապա շարունակելու մեր նամակները:

Պէտք է ասել որ իսկապէս մինչ այսօր ոչ ոք մեզ չէ ստիպել ձեզ հետ նամակցելու, իսկ այսօր մեր եռանդ ստիպում է ձեզ հետ նամակցելու, այն մեծ գործի համար որ ահա տեսնում ենք մեր պարզ աչքերով. դա այն մեծ աշխատանքն է, ինչպէս որ դուք եւս գիտէք, որը զլխաւորաբար ձեր օժանդակութեամբը տեղի կ'ունենայ:



ՄԹԵՐԱՆՈՅԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՌՆԵՐԸ

Լրում է երկու երեք տարին, այս խաղաղ աշխարհում, պրօլետարական Մայր Աշխարհում կեանքը բարեկաւում եւ ուժեղանում է քէ քաղաքականապէս եւ քէ կուլտուրապէս, ու այսպիսի երկրում կառուցվում է ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԸ, որը մեծ մեծ ապագայ է խոստանում:

Դրա պատճառաւ այս տեղի Մեծկերտցիները եւս իրենց ընդհանուր ժողովում որոշեցին որպէս զի իրենք էլ կարողանան նոր կառուցուող Խարբերդի կից, նրա հետ զուգընթացաբար, կառուցանել Մեծկերտի քաղամասը, որուն համար խնդրում ենք ձեր միջամտութիւնը այդ տեղ եղող

Մեծկերտցիներու ընկերութեան, որպէս զի նրանք եւս մասնակցին նոր
ֆաղափի աշխատանքներուն:

Սիրելի հայրենակիցներ, ի հարկէ մենք մեր կողմից երկու նամակ ու-
ղարկել ենք Մեծկերտցիներու ընկերութեան, բայց որովհետեւ կասկածե-
լով որ գուցէ մեր նամակները առած չլինին, դրա համար այս մեր նա-
մակը ուղարկում ենք ձեզ յայտնելու մեր բուն ցանկութիւնը, իսկ դուք
կարող էք այս նամակը նրանց ներկայութեան կարգաւ:

Մնամք ձեր նամակին սպասող,

ՍԱՐԳԻՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ԱՍԱՏՈՒՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
ՍՐԱՍ ՄԻՆԱՍԵԱՆ
(Մեծկերտցիներ)

Սեպ. 29, 1931
ԵՐԵՒԱՆ

Դ.

«ՆՈՐ ԽԱՐԵՐԴ»
Հոկտ. 10, '931

Սիրելի Բոյս Մարի,

Վեց ամիսը բոլորեց անցաւ, իսկ ձեզմէ ոչ մի երկտող եւ նամակ
ստացած չենք: Ես ասկից մի քանի ամիս առաջ Թիֆլիզէն Բեզի նամակ մըն
ալ գրեցի, բայց մինչեւ այսօրս ստոր ալ պատասխանը առած չեմ: Կը յու-
սամ որ այս նամակը առնելուդ զիս շուտով պիտի ջանաս պատասխանել:

Մենք երկու շաբաթ է որ ընտանիքով «Նոր Խարբերդ» գտնուում ենք:
Անուշտ կը յիշես Յարութիւն Աղային Բոյրը, Հանի Էլմաս Սարսուին փե-
սան Արամ Ակոբեանը, որ առաջ Արմաւիր էր մնում, վերջերս այս տեղ
գաղթեց ընտանիքով: Ինքը այս տեղ կառավարիչի գործով եկած է:

Ես անցեալ տարիէն մեծ փափաք ու սէր ունեի մի անգամ գալ ու տես-
նել խորի. Հայաստանը, մասնաւորապէս «Նոր Խարբերդ», բայց առիքը
ներկայացած չէր: Անուշտ երէ դուք հայ բերքեր կը կարգաւ, մինչեւ
հիմա լսած կը լինիք Նոր Խարբերդի մասին, որ այսօր գրեթէ երկու տա-
րի է իր գոյութիւնը ունի:

Նոր Խարբերդը, Երեւանի արեւմտեան կողմը, երկու ժամ հեռու, մի
գեղեցիկ դաւառի վրայ ներկայիս մի քանի շէնքերով կառուցուած մի փոքր
ֆաղափ է եւ պէտք է լինի ապագային: Ներկայիս ունի 5 պատրաստի բնա-
կարան, իւրաքանչիւրը 8 սենեակներէ բաղկացած: Մի շէնքի ալ հիմը
այսօր վաղը կը ձգուի: Ըսել է ձեռքը անցած 6 շէնք կ'ունենայ Նոր Խար-
բերդը՝ մաքուր, գեղեցիկ եւ առողջարար սենեակներով: Ամէն շէնք իր
մէջ կրնայ պարունակել բազում ընտանիքներ: Ներկայիս բնակչութեան
թիւը 55—60-ի կը հասնի: Սրանք առ հասարակ Խարբերդի քաջաներէն,
գիւղերէն են (Խուլլուէն, Քէսիքիէն, Զմեկաձագէն եւն. եւն. տեղերէ):



ԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ (ԱԿՈՃԵԱՆ) Հիւսէյնիկցի
«Նոր Խարբերդ»ի Կառավարիչ

Նոր Խարբերդը իր կարիքներուն համար ունի իր սեփական օթոմո-
պիլը, որ Ամերիկայէն Խարբերդցիներու Միութիւնը ղրկած է:

Այս տարի Նոր Խարբերդը ունեցեր է իր բանջարանոցը որ մասնաւո-
րապէս ատկից արդիւնաբերած է մեծ մասամբ 1930—2030 փութի չափ
ոսկեխնձոր Քանսէրվի գործարանին համար:

Նոյնպէս ձեզի համար ուրախալի էր լսել որ բնակչութիւնը անցեալ
տարիէ տնկած է 1800 հատ պտղատու եւ ֆաղափը զովացնող ծառեր:

Ասկից մի քանի օր առաջ գնացինք Երեւան, եւ տեսանք մեր աչքով
այն մեծ շինարարութիւնը եւ բնակչութեան մեծ անը որ աչքառու տեղ
է գրաւում: Վերջապէս հսկայական նոր կառուցումները հին գեղջուկ տու-
ներու տեղ, տասնեակ տարիներ առաջ ամայացած ֆաղափը այսօրոյն
բազմամարդութեամբ, գեղեցիկ հակապատկերն է անցեալին: Եւ այս
նամակովս կը յուսամ թէ քու եւ Յովսէփի Հայաստանի մասին խանդավառ
հետաքրքրութիւնը բաւական յագուրդ տալիս եմ:

Ընդունեցէ՛ք ձեր եղբորը սէրն ու կարօտը եւ մի ուշացնէ՛ք ձեր
նամակները:

Յ. ԶՈՒԼՈՒՄԵԱՆ

ԿԱՐԵԻՈՐ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Անցեալ Ապրիլին մէջ, Միութեան Պատգամաւորական ժողովին վերջ, քերքերու մէջ հրատարակեցինք եւ յայտարարեցինք հանուր հարբերոցիներու քէ Ընկերութիւններ որ օժանդակած են Միութեան իրաւունք ունին քուէ տալու եւ քուէ առնելու: Ահաւասիկ այն որոշումը որ տրուած է Պատգամաւորական ժողովին մէջ.

«հարբերոց Գաւառի այն Ուսումնասիրացները որոնք առնուազն 1200 տոլարով օժանդակած են ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴԻՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ՝ իրաւունք ունին երկու պատգամաւորներ տալու Միութեան Տարեկան Պատգամաւորական ժողովին»:

Արդէն այս տարուան Պատգամաւորական ժողովին մասնակցեցան նը-ւիրատու ընկերութիւններու եօքը պատգամաւորները, եւ քէ քուէ տուին եւ քէ քուէ առին: Անանկ որ ներկայիս այդ ընկերութիւններէն չորս ներ-կայացուցիչներ անդամ են Կեդրոնական Գործադիր Մարմնի եւ կը վարեն Միութեան գործերը: Ոչ միայն այսօր, այլ Կեդրոնի ժողովներուն ներ-կայ կրնան ըլլալ նաեւ այդ ընկերութիւններէն ուրիշ անձինք խորհրդականի հանգամանքով:

ԿԱՐԵԻՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեր արձանագրութիւնները, տոմարները, բոլոր արխիւները բաց են ա-մէն հետաքրքիր հարբերոցիի առջեւ: Միութեան գործերը խիստ մեծ խը-նայողութեամբ եւ կանոնաւորութեամբ յառաջ կ'ընթանան: Մսխում կամ գեղծարարութիւն երբեք գոյութիւն չունեցած չէ եւ պիտի չունենայ, որքան ասեմ որ Միութեան ներկայ կազմը իր գոյութիւնը շարունակէ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅՆԵՐԷ ՆՈՒԷՐՆԵՐ «ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ»Ի ՀԱՄԱՐ

Բէյսին ԽԱՐԲԵՐԴ-ԽՈՒՎԱԳԻՒՂԻ Ս. Գ. ՀՆՁԱԿԵԱՆ ՅԱՐԷԹ-ՅԱԿՈՐ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ Խորին շնորհակալութեամբ ստացած ենք նը-ւէր մը, \$346.48, իրենց գանձին ամբողջ գումարը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինու-թեան յատկացուելու համար:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆ

ՄԵՄԿԵՐՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ միաձայն հաւանու-թեամբ որոշած է նուիրել 1200 տոլար Նոր հարբերոցի շինութեան համար: Կեդրոնական վարչութիւնն արդէն ստացած է խորին շնորհակալու-թեամբ սոյն գումարին 600 տոլարը:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆ



ԿԱՐԵԻՈՐ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԷՆ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴԻՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Նշատակն է Հա-յաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ մը հիմնել:

1.— Տուններ շինելով յարմար հողի մը վրայ, եւ հոն տե-ղաւարել մասնաւորապէս խարբերոց Գաւառի Հայեր:

2.— Ճարտարարուեստներու հաստատումով անոնց զործ ստեղծել:

Միութեան կրնան անդամակցիլ խարբերոց Գաւառի Հա-յեր՝ վճարելով 1 տոլար մուտք եւ եւ 2 տոլար տարեկան:

Դրամական գործառնութեան պատասխանատու է Կեդրո-նական Գործադիր Մարմինը հաւաքաբար:

Գանձապահը 2000 տոլար երաշխաւորութեան տակ է իր պաշտօնէութեան ամբողջ շրջանին:

Ուսումնասիրաց Ընկերութիւններէ ստացուած գումարնե-րը անձեռնմխելի են եւ պիտի գործածուին Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինելու համար միայն: Իսկ Միութեան տե-ղական ծախքերը պիտի հոգացուին Միութեան Զանգերովը գո-յացած ուրիշ դրամներէ:

$\frac{1}{0}$

11

<< Ազգային գրադարան



NL0410117

12.321